**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8**

## ՀՀ Լոռու մարզպետի կայացած ընդլայնված խորհրդակցության

**10.08.2021թ.** **ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

Կ.Աշրաֆյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ա. Բեջանյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Գրիգորյանը, Դ.Մանուչարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Սահակյանը, Է.Հախվերդյանը, Կ. Խառատյանը, Ն. Համբարձումյանը, Ա.Հակոբյանը, Ա.Թումանյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Ա.Հարությունյանը -մարզպետի խորհրդական
Հ.Ավետիսյանը - մարզպետի խորհրդական
Տ.Հովսեփյանը - մարզպետի օգնական
Է.Կոստանյանը -մարզպետի օգնական

**Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝**

1. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների մասին (զեկ. մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
2. Այլ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**
**ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

ա/ Անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել ստորաբաժանման աշխատակիցների և ըստ ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների պատվաստումների պատշաճ կատարման ուղղությամբ:

բ/ Տարատեսակ միջոցառումների, հանդիպումների և խորհրդակցությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ նախօրոք տեղյակ պահել տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ պատշաճ լուսաբանումն ապահովելու նպատակով և տրամադրել դրանց վերաբերյալ անհրաժեշտ նյութեր:

գ/ Հնարավորինս բացառել անհարգելի կամ անհարկի բացակայությունները:

դ/ Մարզպետի կողմից տրված հանձնարարականների վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն:

8/10/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99